# Renault ARKANA

RENAULT
Passion for life




Կապ **Renault**-ի հետ՝ **+374 (10) 24-75-99:**

Սույն հրապարակումը պարունակում է դրա՝ տպագրության հանձնելու պահին առավել ճշգրիտ և արդիական տեղեկությունները: Փաստաթուղթը կազմված է փորձնական ավտոմեքենաներից և նախատիպերից ստացած տվյալների հիման վրա: Սեփական արտադրանքի անընդհատ կատարելագործման քաղաքականության շրջանակներում Renault ընկերությունը իրեն իրավունք է վերապահում՝ ցանկացած պահի փոփոխություններ մտցնել ներկայացված ավտոմեքենաների, ինչպես նաև լրացուցիչ սարքավորումների բնութագրերի և կառուցվածքի մեջ: Այդ փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները կարճ ժամկետում հասցվում են Renault-ի պաշտոնական ներկայացուցիչներին:

Կախված մատակարարման երկրից որոշ մոդիֆիկացիաներ կարող են տարբերվել նկարագրվող մոդելներից: Սարքավորումների որոշ տեսակներ (սերիական, օպցիոնալ կամ լրացուցիչ) կարող են բացակայել: Առավել թարմ տեղեկությունները կարելի է ստանալ տեղական դիլերից: Տպագրական սարքերի սահմանափակ հնարավորությունների հետևանքով սույն փաստաթղթում ներկայացված թափքի կամ սրահի լրամշկման գույները կարող են որոշակիորեն տարբերվել իրականներից: Հեղինակային իրավունքները պաշտպանված են: Սույն հրապարակման ամբողջական կամ մասնակի վերարտադրությունը ցանկացած ձևով և ցանկացած միջոցներով արգելված է առանց Renault-ի նախնական գրավոր համաձայնության:

**renault.am**

# ՆՈՐ ԴԱՍԻ ՈՒԺԸ

Ո՞րն է իսկական ուժը այսօր: Արդյո՞ք դա միայն ֆիզիկական ուժն է: Իհարկե ոչ: Ուժեղ լինել այսօր նշանակում է միաժամանակ ուժեղ լինել խառնվածքով, մտքով, ոգով, ինտուիցիայով և կամքով: Սա է նոր դասի ուժը:

Նոր Renault ARKANA-ն դրա խորհրդանիշն է:

Renault ARKANA՝ սեդանի էլեգանտության, կուպեի դինամիկայի և քրոսովերի խիզախության եզակի համադրություն:

Սկսեք ծանոթանալ նոր Renault ARKANA կուպե-քրոսովերի հետ և ինքներդ համոզվեք դրանում:

Կուպե-քրոսովերի նորարարական կոնցեպցիան համատեղում է արտահայտիչ դիզայնը, հզորությունն ու ֆրանսիական նրբագեղությունը, ինչը հանդիսանում է Renault ապրանքանշանին բնորոշ գիծ:

Վառ դիզայնը, որն ընդգծվում է թափքի արտահայտիչ գծերով, և տանիքի դեպի ցած սլացող ուրվագիծը դինամիկ և էլեգանտ են դարձնում նոր կուպե-քրոսովերի կերպարը:








# ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՍԱԴԻՈԴԱՅԻՆ ՕՊՏԻԿԱ

Մոդելի դիզայնի միասնական կոնցեպցիան ընդգծում է արտահայտիչ, նրբագեղ, ամբողջությամբ լուսադիոդային Pure Vision օպտիկան՝ ճանաչելի C-աձև տարրերով:

Ամբողջությամբ լուսադիոդային օպտիկան ապահովում է ավելի հզոր լուսային հոսք և բարելավում է տեսանելիությունը օրվա մութ ժամերին:

Հետևի լապտերները կիրառվում են նաև Edge Light տեխնոլոգիայով աշխատող լուսադիոդային տարրեր, որոնք ստեղծում են տրանսպորտային հոսքի մեջ ճանաչելի և թափքի չափերն ընդգծող երկարավուն լուսային «ստորագրություն»՝ 3D-էֆեկտով:






# ԻՆՏԵՐԻԵՐ

Renault ARKANA-ի վառ, նորարարական արտաքինը իր շարունակությունն է գտել լիովին նոր ինտերիերում:

8-դյույմանոց սենսորային դիսփլեյով կենտրոնական բարձակը ուղղված է դեպի վարորդը՝ ապահովելով ավելի հարմարավետ կառավարելիություն ընթացքի ժամանակ:





# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՐՈՒՔՆԵՐԻՆ

Renault-ի դիզայնի մտածված փիլիսոփայությունը նկատելի է Renault ARKANA-ի յուրաքանչյուր տարրում:

Ինտերիերի դիզայներները հատուկ ուշադրություն են դարձրել էրգոնոմիկային: Ավտոմեքենայի առավել հաճախ օգտագործվող ֆունկցիաների համար կենտրոնական բարձակի վրա նախատեսված է հարմարավետ պանել՝ ինտուիտիվ հասկանալի կառավարմամբ: Ինտերիերի նրբաճաշակությունը ընդգծում են կաշեպատ նստատեղերը՝ դեկորատիվ դարձակարերով:





# ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԱԿԱՐԴԱԿ

Ընդարձակ սրահի շնորհիվ Renault ARKANA-ն հարմարավետ է թե´վարորդի, թե´ուղևորների համար:

Էրգոնոմիկ նստատեղերը աչքի են ընկնում զարգացած կողային օժանդակմամբ, կարգավորվում են ըստ բարձրության և գոտկատեղային հատվածում:

Կենտրոնական արմնկակալները թույլ կտան հարմարավետորեն տեղավորվել թե´առջևի, թե´ հետևի շարքում:





# ՀԵՆԱՀԱՐԹԱԿ ԵՎ ՇԱՐԺԻՉ

Նոր TCe 150 տուրբոշարժիչը (150 ձ.ուժ) նախագծված է Renault-Nissan ալյանսում՝ Daimler կոնցեռնի հետ համատեղ:

Renault ARKANA-ն ռուսական շուկայում առաջին մոդելն է, որը համալրվում է նորագույն բենզինային շարժիչով, նոր սերնդի ավտոմատ CVT X-Tronic ավտոմատ փոխանցումատուփով և ինտելեկտուալ լիաքարշ համակարգով:



Renault ARKANA-ն հիմնված է նոր սերնդի մոդուլային SUV-հենահարթակի վրա:

Շասսիի կառուցվածքում բաղադրիչների 55 %-ը նոր են՝ այսօր արտադրվող SUV մոդելների հետ համեմատ: Միևնույն ժամանակ շասսիի մնացած 45 %-ը իրականացված է լավագույն, ժամանակով ստուգված տեխնիկական լուծումներով, որոնք լավագույնս դրսևորել են իրենց և պահանջված են հաճախորդների կողմից:

**ԽԱՌՆՎԱԾՔԻ ՈՒԺԸ**

# ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆԱՑՈՒՄ






**MY SENSE**

Վարելաոճի անհատական կարգավորումներ



**SPORT**

Շարժիչի և կառավարման հստակության առավելագույն պոտենցիալ



**ECO**

Խնայողության և հարմարավետության բալանս ուղևորության ժամանակ



# ՎԱՐՄԱՆ ՌԵԺԻՄՆԵՐ՝ MULTI-SENSE

Ձեր Renault ARKANA-ի խառնվածքը կարող եք ընտրել վարման կարգավորումների անհատականացման MULTI-SENSE համակարգի օգնությամբ: Այն թույլ է տալիս վարորդին ընտրել երեք ռեժիմներից մեկը՝ վերահսկելով շարժիչի արձագանքը, CVT X-Tronic փոխանցումատուփի աշխատանքի ալգորիթմը և ղեկանիվին հաղորդվող ուժի մակարդակը: Համոզվեք դրանում ինքներդ:

Ռեժիմներից յուրաքանչյուրը առաջարկում է նաև կլիմատ-կոնտրոլի և սրահի մթնոլորտային Ambient Light 8-գույնանի լուսավորության հատուկ կարգավորումներ:




# ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԼԻԱՔԱՐՇ ՀԱՄԱԿԱՐԳ

Ցանկացած իրավիճակում վստահություն պահպանելուն կնպաստի 4x4i ինտելեկտուալ լիաքարշ համակարգը՝ աշխատանքի երեք ռեժիմերով՝ 2WD, AUTO և LOCK:

2WD ռեժիմում ոլորող մոմենտը հաղորդվում է միայն առջևի անիվներին՝ ապահովելով վառելիքի օպտիմալ ծախս:

AUTO ռեժիմի ընտրության դեպքում ոլորող մոմենտը բաշխվում է առնիների միջև՝ կախված ճանապարհային պայմաններից:

LOCK ալգորիթմը նախատեսված է արտաճանապարհային պայմաններում երթևեկելու համար և կարող է ակտիվացվել մինչև 80 կմ/ժ արագության պայմաններում: Այս դեպքում ոլորող մոմենտը առջևի և հետևի անիվների միջև բաշխվում է 50:50 համամասնությամբ:








# ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ՑՈՒՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

Renault ARKANA-ն կապահովի սրահի ջերմ մթնոլորտը նույնիսկ խստաշունչ ձմռանը, ինչին օգնում է տաքացման համակարգերի համալիրը: Տաքացվում են առջևի և հետևի նստատեղերը, ղեկանիվը, դիմապակին և ողողիչների ջրամուղները:

Դիստանցիոն գործարկման Renault Start համակարգը թույլ է տալիս անվտանգ գործարկել և տաքացնել շարժիչը՝ օգնելով սահմանել սրահի հարմարավետ ջերմաստիճանը նույնիսկ էքստրեմալ ջերմաստիճանային պայմաններում:

Renault Start-ը ակտիվանում է երկու եղանակով՝ բանալի-քարտի օգնությամբ, կամ էլ EASY LINK մուլտիմեդիա համակարգի էկրանի միջոցով ծրագրավորելով:





# BOSE®՝ ՁԱՅՆԻ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅՈՒՆ

Renault ARKANA-ն սարքավորված է պրեմիում-կարգի BOSE® աուդիոհամակարգով՝ 8 տեխնոլոգիապես հարուստ բարձրախոսներով, սաբվուֆերով, որը Fresh Air տեխնոլոգիայի շնորհիվ ապահովում է ցածր հաճախականությունների խորություն, և ձայնային պրոցեսորով համալրված թվային ուժեղացուցիչով:

Համակարգը հատուկ նախագծվել է Renault ARKANA-ի համար, ինչը ապահովել է ձայնի աղբյուրների օպտիմալ դասավորվածություն և թույլ է տալիս հասնել համերգային որակի հնչողության:

BOSE® SURROUND տեխնոլոգիան համակցում է ձայնի բարձր որակն ու իրական հնչողությունը, որը մոտ է կենդանի համերգային կատարմանը: Գծային հնչողության ռեժիմը առանձնանում է կոմպոզիցիաների ավելի ճշգրիտ, «ստուդիական» վերարտադրմամբ:





# EASY LINK ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ՅԱՆԴԵՔՍ.ԱՎՏՈ ԾՐԱԳՐՈՎ

Նոր EASY LINK մուլտիմեդիա համակարգը սարքավորված է 8-դյույմանոց սենսորային էկրանով՝ մասշտաբայնացման հնարավորությամբ:

Android Auto և Apple CarPlay ծրագրերի օգնությամբ դուք կարող եք կառավարել սմարթֆոնի սիրելի հավելվածներ անմիջապես մուլտիմեդիա համակարգի էկրանից: Ընտրել նպատակակետը, գծել ճանապարհը, գտնել օպտիմալ երթուղին՝ իրական ժամանակում տրաֆիկին համապատասխան. այս ամենը հնարավոր է Յանդեքս.Ավտո հավելվածի շնորհիվ:

Ավտոմեքենայի կառավարումը էլ ավելի են հեշտացնում ձայնային օգնականները: Алиса-ն, Siri-ն և Google Assistant-ը կօգնեն գրել և ուղարկել հաղորդագրություններ, կատարել զանգեր, համացանցում գտնել անհրաժեշտ տեղեկությունները և նույնիսկ կզրուցեն ձեզ հետ: Ձայնային կառավարումը օգնում է վերահսկել իրավիճակը՝ առանց ճանապարհից շեղվելու:



# ՎԱՐՈՐԴԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Բացի ակտիվ անվտանգության ավանդական համակարգերից (ABS, ESP, Hill Start Assist) նոր Renault ARKANA-ն առաջարկում է վարորդին օժանդակող մի շարք համակարգեր, որոնք հեշտությամբ կառավարվում են EASY LINK-ի էկրանից: Կախված համալրումից հասանելի են արագության սահմանափակիչով քրուիզ-կոնտրոլը, անվադողերում ճնշման վերահսկման համակարգը, շրջանածիր տեսադաշտի տեսախցիկները, ինչպես նաև կույր գոտիների մոնիթորինգի համակարգը, որը կողային հայելիների LED-ազդանշանների օգնությամբ նախազգուշացնում է մոտեցող ավտոմեքենայի մասին:



Կույր գոտիների վերահսկման համակարգ



Շրջանածիր տեսադաշտի տեսախցիկներ



Կայանման հետևի ցուցիչներ



Անվտանգության 6 բարձիկ



## ԱՄԵՆ ԻՆՉ ՎԵՐԱՀՍԿԵԼԻ Է

Renault ARKANA-ի շրջանածիր տեսադաշտի տեսախցիկների համակարգը չորս (հետևի և առջևի տեսադաշտի, ինչպես նաև կողային հայելիների մեջ ներկառուցված) տեսախցիկներից մեկից ստացվող պատկերը հաղորդում է EASY LINK մուլտիմեդիա համակարգի էկրանին՝ ապահովելով առավելագույնս հարմարավետ կայանում և իրավիճակի լիակատար վերահսկողություն ավտոմեքենայի ամբողջ պարագծով:

# Իրականացման տարբերակներ

## LIFE



- Ամբողջությամբ լուսադիոդային օպտիկա՝ Pure Vision
- Ոճավորված սկավառակներ CELEBRIS 17"
- Օդորակիչ
- Առջևի և հետևի ապակիների էլեկտրական ամբարձիչներ, վարորդի կողմից՝ իմպուլսային
- Աուդիոհամակարգ AUX + USB + Bluetooth + ենթադեկային ջոյսթիկ
- Բորտ համակարգիչ՝ 3,5-դյույմանոց TFT-էկրանով
- Ղեկի կարգավորում ըստ բարձրության և թռիչքի
- Կենտրոնական բարձակ՝ կարգավորվող արմնկակալով
- Արտաքին հայելիների էլեկտրակառավարում և տաքացում
- Առջևի անվտանգության բարձիկներ ուղևորի և վարորդների համար
- Առջևի կողային անվտանգության բարձիկներ
- Շարժիչի կարտերի պողպատյա պաշտպանություն
- Լիաչափ պահեստային անիվ
- Արտակարգ կապի «ԷՌԱ-ԳԼՈՆԱՍ» համակարգ
- ESP (կուրսային կայունության համակարգ) +HSA (զառիվեր մեկնարկին օժանդակող համակարգ)

**ՕՊՑԻԱՆԵՐ**

- Comfort City 1 փաթեթ
  — Առջևի նստատեղերի տաքացում
  — Կայանման հետևի ցուցիչներ
  — Մոխրաման և կրակայրիչ

## DRIVE



- Ռադիատորի ճաղավանդակի վերին հատվածի քրոմապատ ներդիր
- Ղեկանիվի կաշեպատում
- Կայանման հետևի ցուցիչներ
- Արագության սահմանափակիչով քրուիզ-կոնտրոլ՝ ղեկի վրայից կառավարմամբ
- Առանց բանալիի հասանելիություն՝ Welcome/Goodbye ֆունկցիայով
- Շարժիչի դիստանցիոն գործարկման Renault Start ֆունկցիա
- Առջևի նստատեղերի տաքացում
- Անձրևի և լույսի ցուցիչներ
- Շարժիչի գործարկման Start/Stop կոճակ

**ՕՊՑԻԱՆԵՐ**

- Comfort City 2 փաթեթ
  — Դիմապակու և ողողիչների ջրամուղների տաքացում
  — Ղեկանիվի տաքացում
- Techno փաթեթ
  — Easy Link մուլտիմեդիա համակարգ՝ 8" սենսորային էկրանով և Յանդեքս.Ավտո, Apple CarPlay և Android Auto ծրագրերով
  — Առջևի և հետևի USB-միակցումներ
  — Հետին տեսադաշտի տեսախցիկ
- Look 1 փաթեթ
  — Երկգույնանի թեթևաձույլ սկավառակներ ORTIS 17"՝ ալմաստային հղկման էֆեկտով
  — Հակամառախուղային լուսարձակներ
- Look 2* փաթեթ
  — Երկգույնանի թեթևաձույլ սկավառակներ ORTIS 17"՝ ալմաստային հղկման էֆեկտով
  — Հակամառախուղային լուսարձակներ
  —Կողային և հետևի քրոմապատ մոլդինգներ, պատուհանային գծի եզրակավորում
- Անվտանգության կողային վարագույրներ

* TCe 150 շարժիչով տարբերակների համար

# Իրականացման տարբերակներ

## STYLE



- Նստատեղերի կոմբինացված պաստառապատում
- Վարորդի նստատեղի կողային օժանդակում
- Ղեկանիվի և փոխանցումատուփի լծակի կաշեպատում
- Արմնկակալներ հետևի ուղևորների համար
- Կողային քրոմապատ մոլդինգներ
- Easy Link մուլտիմեդիա համակարգ՝ 8" սենսորային էկրանով և Յանդեքս.Ավտո, Apple CarPlay և Android Auto ծրագրերով
- Հետին տեսադաշտի տեսախցիկ
- Սրահի մթնոլորտային լուսավորություն (hասանելի է 8 գույնով)*
- Վարման ռեժիմների ընտրության համակարգ՝ MULTI-SENSE*
- Կլիմատ-կոնտրոլ
- Ղեկանիվի տաքացում
- Դիմապակու տաքացում
- Դիմապակու ողողիչների ջրամուղների տաքացում
- Հետևի թափարգելի կողային քրոմապատ մոլդինգներ
- Երկգույնանի թեթևաձույլ սկավառակներ ORTIS 17"՝ ալմաստային հղկման էֆեկտով
- Հակամառախուղային լուսարձակներ

**ՕՊՑԻԱՆԵՐ**

- Փաթեթ«Անվտանգություն»*
  — Կույր գոտիների վերահսկման համակարգ
  — Շրջանաձիր տեսադաշտի տեսախցիկներ
- Հետևի նստատեղերի տաքացում
- Նավիգացիոն համակարգ
- Պրեմիում կարգի աուդիոհամակարգ BOSE®՝ 8 բարձրախոսով, ուժեղացուցիչով և սաբվուֆերով
- Անվտանգության կողային վարագույրներ

## EDITION ONE



- Նստատեղերի կաշեպատում
- Հետևի նստատեղերի տաքացում
- Պրեմիում կարգի աուդիոհամակարգ BOSE®՝ 8 բարձրախոսով, ուժեղացուցիչով և սաբվուֆերով
- Շրջանաձիր տեսադաշտի տեսախցիկներ
- Կույր գոտիների վերահսկման համակարգ
- Սրահի գործվածքային գորգեր՝ Edition One գրվածքով
- Դռների շեմքերի քրոմապատ վերդիրներ՝ ARKANA գրվածքով
- Անվտանգության կողային վարագույրներ

**ՕՊՑԻԱՆԵՐ**

- Նավիգացիոն համակարգ

* TCe 150 շարժիչով տարբերակների համար

# Իրականացման տարբերակներ



Սպիտակ
BLANC GLACIER



Սև
NOIRE NACRE



Դարչնագույն
MARRON GLACE



Արծաթագույն
GRIS PLATINE



Մոխրագույն
DARK GREY



Կարմիր
RED FUSION



Դարչնականաչավուն
TENAKURU

# Անվասկավառակներ



Ոճային սկավառակներ CELEBRIS 17"



Թեթևաձույլ սկավառակներ ORTIS 17"



Թեթևաձույլ սկավառակներ MONTIS 17"

# Գաբարիտային չափեր



**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՉԱՓՍԵՐ, ՄՄ**

| | |
|---|---|
| Գաբարիտային երկարություն | 4 545 |
| Անվային բազա | 2 721 |
| Առջևի ցվիք | 852 |
| Հետևի ցվիք | 970 / 964 |
| Առջևի անիվների անվամեջ, մմ | 1 591 |
| Հետևի անիվների անվամեջ, մմ | 1 586 |
| Լայնությունը հայելիներով/ծալված հայելիներով | 2 063 /1 864 |
| Չբեռնված մեքենայի բարձրությունը | 1 565 |
| Չբեռնված մեքենայի բարձրությունը՝ բեռնախցիկի բաց դռնով | 2 157 |
| Չբեռնված մեքենայի շեմքի բարձրությունը | 778 |
| Ճանապարհային լուսածերպ | 208 / 205 |
| Տարածությունը հետևի ուղևորների ծնկների հատվածում | 218 |

| | |
|---|---|
| Սրահի լայնությունը առջևի ուղևորների արմունկների հատվածում | 1 430 |
| Սրահի լայնությունը հետևի ուղևորների արմունկների հատվածում | 1 427 |
| Սրահի լայնությունը առջևի ուղևորների ուսերի հատվածում | 1 402 |
| Սրահի լայնությունը հետևի ուղևորների ուսերի հատվածում | 1 368 |
| Առաստաղի բարձրությունը նստատեղերի առաջին շարքում, առջևի նստատեղի միջին դիրքում | 877 |
| Առաստաղի բարձրությունը նստատեղերի հետևի շարքում, առջևի նստատեղի միջին դիրքում | 853 |
| Բեռնախցիկի լայնությունը վերին հատվածում/ առավելագույն | 943 / 1 013 |
| Բեռնախցիկի լայնությունը ստորին հատվածում | 869 |
| Բեռնախցիկի ներքին լայնությունը անվակամարների մակարդակում | 987 |
| Առավելագույն երկարությունը ծալված հետևի նստատեղերով | 1 834 |
| Առավելագույն երկարությունը մինչև հետևի նստատեղերը | 1 039 |

# Աքսեսուարներ



«Շնաձկան լողակ» ալեհավաք



Շեմքեր



Ձուլածո անիվներ



Գործվածքից գորգեր



Սրահի գործվածքային գորգեր



Պլանշետի ամրան



Արևապաշտպան փականակներ



Բեռնախցիկի տակդիր




Բեռնախցիկի ուղղաձիգ և հորիզոնական ցանցեր

# Տեխնիկական բնութագրեր

| **Շարժիչ** | **1,6 ՄՓ5** | **1,6 CVT X-Tronic** | **1,6 ՄՓ6** | **TCe 150 CVT X-Tronic** | **TCe 150 CVT X-Tronic** |
|---|---|---|---|---|---|
| Քարշակում | 4x2 | 4x2 | 4x4 | 4x2 | 4x4 |
| Շարժիչի տեսակ | Բենզինային՝ վառելիքի բաշխված ներարկմամբ | | | Բենզինային՝ տուրբոմղմամբ և վառելիքի անմիջական ներարկմամբ | |
| Էկոլոգիական դաս | | | Euro 5 | | |
| Նստատեղերի քանակը | | | 5 | | |
| **ՇԱՐԺԻՉ** | | | | | |
| Աշխատանքային ծավալ, սմ³ | 1598 | | | 1332 | |
| Գլանի տրամագիծ x մխոցի քայլ, մմ | 78x83,6 | | | 72,2x81,4 | |
| Գլանների/փականների քանակը | | | 4/16 | | |
| Սեղման աստիճանը | | | 10,5 | | |
| Առավելագույն հզորությունը՝ ըստ ԵՏՄ նորմերի, (DIN, ձ.ուժ) / ծնկաձև լիսեռի պտույտների հաճախականության դեպքում, պտ/ր | 84 (114) / 5500 | | | 110 (149,6) / 5250 | |
| Առավելագույն ոլորող մոմենտը՝ ըստ ԵՏՄ նորմերի, Նմ / ծնկաձև լիսեռի պտույտների հաճախականության դեպքում, պտ/ր | 156 / 4000 | | | 250 / 1700 | |
| **ՓՈԽԱՆՑՈՒՄԱՏՈՒՓ** | | | | | |
| Փոխանցումների թիվը | Մեխանիկական, 5-աստիճան փոխանցումատուփ | Անաստիճան, ԱՓ՝ 6 աստիճանների իմիտացմամբ | Մեխանիկական, 6-աստիճան փոխանցումատուփ | Անաստիճան, ԱՓ՝ 7 աստիճանների իմիտացմամբ | |
| Փոխանցումային թվերի տիրույթ | I — 3,727<br>II — 2,048<br>III — 1,321<br>IV — 0971<br>V — 0,738 | 3,874–0,532 | I — 3,727<br>II — 2,105<br>III — 1,452<br>IV — 1,114<br>V — 0,914<br>VI — 0,767 | 2,631–0,378 | |
| Հետընթաց փոխանցում | 3,545 | 3,646 | 3,687 | 1,960 | |
| **ՂԵԿԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ** | | | | | |
| Ուժեղացուցիչի տեսակը | | | Էլեկտրաուժեղացուցիչ | | |
| Հետադարձի շառավիղը, մ | | | 11 | | |
| Ղեկի ամբողջական պտույտների թիվը | | | 3,1 | | |
| **ԿԱԽՈՑ** | | | | | |
| Առջևի կախոց | Անկախ զսպանակային Մակֆերսոն տիպի՝ փոխագուցավոր հիդրավլիկ մեղմիչներով և լայնակի կայունացման կայունացուցիչով | | | | |
| Հետևի կախոց | Կիսաանկախ, զսպանակային՝ փոխագուցավոր հիդրավլիկ մեղմիչներով և լայնակի կայունացման կայունացուցիչով | | Անկախ, բազմալծակ, զսպանակային՝ փոխագուցավոր հիդրավլիկ մեղմիչներով և լայնակի կայունացման կայունացուցիչով | Կիսաանկախ, զսպանակային՝ փոխագուցավոր հիդրավլիկ մեղմիչներով և լայնակի կայունացման կայունացուցիչով | Անկախ, բազմալծակ, զսպանակային՝ փոխագուցավոր հիդրավլիկ մեղմիչներով և լայնակի կայունացման կայունացուցիչով |

| **Շարժիչ** | **1,6 ՄՓ5** | **1,6 CVT X-Tronic** | **1,6 ՄՓ6** | **TCe 150 CVT X-Tronic** | **TCe 150 CVT X-Tronic** |
|---|---|---|---|---|---|
| **ԱՆԻՎՆԵՐ ԵՎ ԱՆՎԱԴՈՂԵՐ** | | | | | |
| Անվադողերի չափսը | | | 215/60 R17 | | |
| **ԱՐԳԵԼԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ** | | | | | |
| ABS Bosch | | | 9,3 | | |
| Առջևի արգելակներ՝ հովացվող սկավառակային, տրամագիծ/հաստություն, մմ | | | 280/24 | | |
| Հետևի արգելակներ՝ թմբուկային, դյույմ | | | 9 | | |
| **ԴԻՆԱՄԻԿ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ** | | | | | |
| Աերոդինամիկա, մ²/Cx | | | 0,89/0,36 | | |
| Առավելագույն արագություն, կմ/ժ | 183 | 172 | 180 | 191 | 191 |
| Թափառքը 0-100 կմ/ժ | 12,4 | 15,2 | 13,3 | 10,2 | 10,5 |
| Տեղից 1000 մ ճանապարհ անցնելուժամանակը`վրկ | 33,2 | 34,7 | 33,9 | 31,6 | 32,1 |
| **ՎԱՌԵԼԻՔԻ ԾԱԽՍ** | | | | | |
| $CO_2$ արտանետումներ, գ/կմ | 161 | 160 | 178 | 160 | 162 |
| Քաղաքային ցիկլ, լ/100 կմ | 9,2 | 9,0 | 9,9 | 9,1 | 9,1 |
| Արտաքաղաքային ցիկլ, լ/100 կմ | 5,6 | 5,7 | 6,4 | 6,0 | 6,1 |
| Խառը ցիկլ` լ/100 կմ | 7,7 | 6,9 | 7,0 | 7,1 | 7,2 |
| **ԲԱՔԻ ՏԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ** | | | | | |
| Վառելիքի բաքի տարողությունը, լ | | | 50 | | |
| **ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ** | | | | | |
| Չբեռնված զանգված, կգ | 1370–395 | 1370–1505 | 1378–1505 | 1378–1471 | 1378–1571 |
| Առջևի սռնիի բեռնվածություն, կգ | 920–1000 | 920–1000 | 980–1020 | 920–1000 | 980–1020 |
| Հետևի սռնիի բեռնվածություն, կգ | 1005–1010 | 1005–1010 | 1040–1045 | 1005–1010 | 1040–1045 |
| Առավելագույն թույլատրելի զանգվածը, կգ | 1926 | 1926 | 1926 | 1926 | 1954 |
| Արգելակներով սարքավորված կցորդի առավելագույն թույլատրելի զանգվածը, կգ | 1200 | 1200 | 1350 | 1200 | 1500 |
| Առանց արգելակների կցորդի առավելագույն թույլատրելի զանգվածը, կգ | 685 | 690 | 725 | 725 | 750 |
| **ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԼՈՒՍԱԾԵՐՊ** | | | | | |
| Ճանապարհային լուսածերպ, մմ | 208 | 208 | 205 | 208 | 205 |